

20.818

Գ. ԲԵՐԳՍԱՆ

ԼԱ 21
ԿԻՆԵ 8 ԿՈՄ.
Մենա 8 կոպ.

ԳՆԱԿՈՒԹՅԱՆ
ԻՆՏԻՏՈՒՏ
ԵՐԵՎԱՆԻ
ԱԿԱԴԵՄԻԱ
ՍՍՏՐ

ՖԱՇԻԶՄ

Թարգմ. Վ. Ա. Գ.



329.18

Բ-55

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
„ՀՅՈՒՄՈՒՐԱՅԻՆ ԿՈՒԼԱՍ“
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1982

329.18

P-55

15 JAN 2010

Գ. ԲԵՐԳՄԱՆ

ՖԱՇԻԶՄ

05 FEB 2007

Թարգմ. Վ. Ավ.

«Կոմունիստներին գնդակահարել առանց այլեվայ-
թարյան» (Գերմանիայի Մյունխեն ֆազաֆի Ֆաշիս-
տական ջոկատներին տրված հրամաններից)

ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋԱՑԱԿ ՖԱՇԻԶՄԸ

Բարձր լսել են ֆաշիստների մասին: Մեր թերթերը
ներսնց մասին գրում են համարյա ամեն օր: Բոլորն էլ գի-
տեն, վոր ֆաշիզմը—դա բուրժուազիայի դիկտատուրայի,
նրա անսահման իշխանություն զենքն է: Սակայն ինչով է
տարբերվում ֆաշիստների իշխանությունը «սովորական»
բուրժուական իշխանությունից:

Մինչև համաշխարհային պատերազմը բոլոր բուրժուա-
կան յերկրներում գոյություն ունեյին (այժմ էլ
գոյություն ունեն) պարլամենտներ, այսինքն ընտր-
ված պատգամավորների ժողով, վորը համար-
վում է յերկրի բարձրագույն իշխանություն: Պարլամենտ-
ները հրապարակում էին որենքները, քննում էին կառա-
վարության դործերը, հաստատում էին պետության յեկա-
մուտների և ծախսերի (բյուջեյի) նախահաշիվը: Իհարկե,
պատգամավորների մեծամասնությունը կազմում էին բուր-
ժուական կուսակցությունների անդամները: Սակայն պար-
լամենտներում կային նաև բանվորական կուսակցությու-
նների ներկայացուցիչները. նրանցից մի քանիսին բուր-
ժուական կաշառում էր, բայց և այնպես, բանվորական
պատգամավորների մի մասը հնարավորություն էր ունե-

նաև դուրս գալու պարլամենտում և բաց և իբաց հայտնելու ժողովրդին դասակարգային պայքարի ճշմարտությունը:

Ավելի խոշոր նշանակություն ունեն աշխարհային պարլամենտական ընտրությունների ժամանակ բանվորական կուսակցությունները կարողանում էին ազդեցիկ մղել հանուն իրենց պահանջների, հանուն բանվորների և աշխատավոր գյուղացիության շահերի: Բացի դրանից, ընտրությունների արդյունքից, այսինքն զանազան կուսակցությունների թեկնածուներին տրված ձայների թվից կարելի էր մասամբ գաղափար կազմել ժողովրդական մասսաների տրամադրության մասին, հետևաբար և յուրաքանչյուր կուսակցություն կարողանում էր ստուգել և կշռել իր ուժերը: Որինակ, 1917 թվին Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքային դեմոստրի ընտրությունները Յեվ ահա, բոլշևիկներին տրված ձայների թվից դատելով, Լենինը յեղբակացրեց, վոր պրոլետարիատի վստահությունն աճում է զեպի բոլշևիկները (Իհարկե, կային նաև բազմաթիվ ավելի կարևոր նշաններ, բայց և այնպես, ընտրություններն էլ մի վորեհ բան ցույց տալիս էին, ինչպես բարոժատրի սլաքները ցույց են տալիս փոթորիկի մոտենալը): Կամ թե վերցնենք գերմանական պարլամենտի վերջին ընտրությունները, վորոնք կայացան 1930 թվին սեպտեմբերի 14-ին: Կոմունիստներն ստացան 4 միլիոն 599.000 ձայն, իսկ Նախորդ, 1928 թվին ընտրություններին նրանք ստացան 3 միլիոն 250.000 ձայն: Յեվ այս հաջողությունը ձեռք բերվեց բուրժուազիայի իշխանության որոք, յերբ բուրժուազիան և նրա կուսակցություններն իրենց տրամադրության տակ ունեն թե իշխանությունը, թե մամուլը և թե փող: Նշանակում է, վոր Գերմանիայում մասսաների վստահությունն աճել է զեպի կոմունիստները: Պարզ է, վոր կոմունիստները պարլամենտ էին դնում վոչ թե նրա համար, վոր հույս ունեյին մի վորեհ արդյունք ստանալու այդ բուրժուական

հիմնարկությունից: Ընդհակառակն, ընտրությունների ժամանակ կոմունիստներն ամեն որ հայտարարում էին, վոր պարլամենտից վոչինչ չի կարելի սպասել, վոր Գերմանիայում պետք է հաստատել խորհրդային իշխանություն: Ուրեմն, ընտրություններն ոգտագործվում էին հեղափոխական ազդեցիկայի համար:

Սակայն խնդիրը պարլամենտում չէ միայն: Բանվորները տառնյակ տարիների ընթացքում պայքարել են իրենց իրավունքների համար և աստիճանաբար ձեռք են բերել իրավունք, ունենալու իրենց կուսակցությունները, իրենց արհեստակցական միությունները, իրենց թերթերը, հրատարակելու իրենց սեփական գրքերը, հավաքվելու, խոսելու և այլն: Նրանք ձեռք են բերել նաև գործադուլ հայտարարելու իրավունք: Յեվ չնայած բուրժուական իշխանությունը շարունակ խախտում էր այդ իրավունքները, այնուամենայնիվ նրան չէր հաջողվում բոլորովին վոչնչացնել նրանց: Ճիշտ է, նրա ձեռքում գտնվում էին բոլոր հարստությունները և նա կարողանում էր հաղար անգամ ավելի շատ թերթեր հրատարակել, քան բանվորական կուսակցությունները, կարողանում էր կաշառել բանվորական ղեկավարների մի մասին, կարողանում էր իր հսկայական հարստություններից մի վորեհ չնչին գումար հատկացնել բանվորների մի մասի համար և իր կողմը զրավել բանվորների այդ փոքրաթիվ մասին: Բայց և այնպես, պրոլետարիատը ձեռք բերած իր իրավունքներն ոգտագործում էր կապիտալիստների դեմ մղած պայքարում:

Իսկ Ֆաշիստներ վոչնչացրին այդ իրավունքները:

* * *

Վորպեսզի հասկանալի լինի, թե ինչ է Փաշիզմը և ինչպե՞ս առաջացավ նա, դրա համար անհրաժեշտ է հետաքարծ ահնարի ձգել:

Թշնամանարով մեկը-մյուսի հետ, դանադան յերկր-ներն կալիտալիստները բռնկեցրին համաշխարհային սոսկալի պատերազմ:

Բանվորների մի մասը, մանավանդ նրանք, ովքեր համեմատաբար լավ էյին վաստակում, ինքնախաբեյության յնթարկվեցին և հավատացին, վոր պատերազմը մղվում է վոչ թե բուրժուազիայի, այլ վողջ ժողովրդի շահերի համար: Այսպես էյին մտածում բանվորներից շատերը Գերմանիայում, Անգլիայում և այլ յերկրներում: Իրենց պարլամենտի միջոցով, իրենց տերտերներն, գրողների, թերթերի և գլխավորում յուրաքանչյուր յերկրի բուրժուազիան հավատացնում էր ժողովրդին, վոր յեթե մինչև այժմ վաս էր աղբվում, ապա դրանում մեղավորը թշնամի յերկիրն է և հենց վոր նա հաղթվի, այն դեպքում ամեն ինչ լավ կլինի: Այս խաբեբայությանը բոլոր յերկրներում նպաստում էյին պրոլետարական գործի զավաճանները—սոցիալ-դեմոկրատները (մենշևիկները):

Խաբեբայությունը, ինչպես ասում են, «հայաբանիստ» լին» էր: Պատերազմից հետո կյանքը չլավացավ, այլ ընդհակառակն, էլ ավելի վատթարացավ վոչ միայն բանվորների և աշխատավոր գյուղացիների համար, այլ և ծառայողների, ինտելիգենտների, կրտսեր սպաների, մանր առևտրականների և արհեստավորների զգալի մասի համար: Պատերազմից շահեցին միայն կալվածատերերը, բանկիրները, խաղողուկները, գործարանատերերը և սպեկուլյանտները:

Այն ժամանակ ժողովրդական մասսաների զգաճությունն սկսեց աճել: Բանվորները գործադուլ էյին անում: Մտեղծվեցին կոմունիստական կուսակցություններ: Նրանք միացան Կոմունիստական Ինտերնացիոնալին, վորն էր պայքարում ողտագործեց մեր Հոկտեմբերի հարուստ փորձը: Խորհուրդների յերկիրը հաղթեց իր թշնամիներին և ամբողջ աշխարհի աշխատավոր մասսաները նրա վրա նայեցին:

մեծ հաշտով, վորպես վողջ պրոլետարիատի, բոլոր նեղված-ների համար լավագույն մարտնչողի վրա:

Ահա այն ժամանակ խոշոր բուրժուազիան ռեցիդիվ-րեց իր կրկնակի խաղը: Ուժով, սվիններով և մահաատի-ներով նա խեղդում էր բանվորների և գյուղացիների աղա-սամբաթյունները: Այդ բանում նրան ոգնում էյին ապա-ների, կալվածատերերի ու բուրժուաների վորդինների և այլ զանազան խաժամուժ ամբոխի (сброд) կամավորական ջա-կատները: Հենց այս խաժամուժ ամբոխի խմբերից ստեղծ-վեցին Գաշիստների առաջին ջոկատները:

Մեկայն միևնույն ժամանակ բուրժուազիան աշխա-տում էր խաբել ժողովրդին: Նա բանվորներին խոստացավ բարձրացնել աշխատավարձը, կրճատել բանվորական որը, իսկ գյուղացիներին—հող:

Թե վրեժ լուծելու և թե խաբելու գործում—բուրժուա-զիային օգնում էյին սոցիալ-դեմոկրատները (մենշևիկները): Բանվորներն և շատ ուրիշ աշխատավորներն շարունակ չե-յին հավատում հին բուրժուական կուսակցություններին, բայց գեռ հավատում էյին սոցիալ-դեմոկրատներին: Մա-այն ժամանակ ամենաուժեղ կուսակցությունն էր և յեթե նա վտաքի հաներ մասսաներին վճռական պայքարի, ապա բուրժուազիայի վախճանը յեկած կլիներ: Բայց սոցիալ-դե-մոկրատները չարեցին այդ: Նրանք ամեն կերպ աշխատե-ցին հետ կանգնեցնել մասսաներին վճռական գործողություն-ներին: Նրանք վրկեցին բուրժուական իշխանությունը: Նրանք հնարավորություն տվին նրան ժամանակ շահելու, կաղաղովելու և ամբալնդվելու:

Իսկ այդ ժամանակ փոթորիկն իջավ: Առաջին հեղա-փոխական գրոհը հետ մղվեց: Պրոլետարիատը մի քանի տա-րի ուժասուղալվեց: Մանր բուրժուազիան, տեսնելով հեղա-փոխության անհաջողությունը, յերեսը դարձրեց նրանից: Ձեռք ենեց այդ ժամանակ սնունդ առավ Ֆաշիզմը:

Բուրժուազիային հաջողվեց հետ մղել առաջին պրոլետարական հարձակումը: Այդ նրան հաջողվեց՝ բռնությունը խաբեբայության հետ միացնելու շնորհիվ: Ժողովրդի գլխավոր խաբեբաները սոցիալ-դեմոկրատներն էին: Սակայն բուրժուազիան հասկանում էր, Վոր պրոլետարիատը ժամանակավորապես միայն պարտվեց: Նա տեսավ, Վոր յերևան յեկան կոմունիստական կուսակցություններ, Վորոնք մերկացնում են մենշևիկական խաբեբայությունները և իրենց շարքերն են գրավում լավագույն, մարտական բանվորներին, բատրակներին, գյուղական չքավորներին: Բուրժուազիան հասկացավ, Վոր նա սխալված է կենաց և մահի պայքար մղել պրոլետարիատի հետ: Բուրժուազիան հասկանում էր նաև, Վոր հետագա կռիվներում բանվորները կտրուկ են չլսել սոցիալ-դեմոկրատների քարոզներին: Վերջապես, բուրժուազիան լավ է հիշում իրեն համար սարսափելի այն փաստը, Վոր 1918-1929-1920 թվերին զինվորներն յերբեմն հրաժարվում էին կրակել հեղափոխական բանվորները վրա և տեղ-տեղ նույնիսկ իրենք ևս մասնակցում էին ապստամբություններին:

Յեթե հաստատ հույս չեր կարելի դնել Վոչ բանակի և Վոչ էլ մենշևիկական խաբեբայության հաջողության վրա, ապա ուրեմն ինչի՞ վրա հույս դնել: Պետք էր մի Վոբեհ նոր բան: Իր հին իշխանությունը բուրժուազիան ուղղում էր նոր յեղանակով փրկել:

Այդ «նոր» յեղանակը հանդիսացավ ֆաշիզմը:

Վերջին տարիներում ֆաշիզմն ամեն տեղ դարձացավ բոլոր բուրժուական յերկրներում: Մի քանի յերկրներում ֆաշիստներն արդեն վարում են պետությունը, մի քանիներում—պատրաստվում են վերցնել իշխանությունը, ափելի հիշող, Վոչ թե վերցնել, այլ ընդունել այն իր տիրոջ—բուրժուազիայի ձեռքից: Վերջապես, կան նաև այնպիսի յերկրներ, ուր ֆաշիզմը նոր է ստեղծվել: Սակայն չնայած

այս խայտաբղետության, այնուամենայնիվ պարզ է, Վոր ֆաշիզմը դառնում է բուրժուազիայի ընդհանուր զենքն ընդդեմ նրան սպառնացող պրոլետարական հեղափոխության: Յեվ ինչքան մոտենում է այդ հեղափոխությունը, այնքան ափելի յե սարսափում բուրժուազիան նրանից, այնքան ափելի մեծ յցանկությամբ և արագությամբ է բռնում բուրժուազիան ֆաշիզմի պոչից:

Ֆաշիստներն իրենց ամենից ափելի պարզ կերպով «ցույց տվեցին» Իտալիայում. նրանք այնտեղ 9 տարի յե, ինչ կառավարում են յերկիրը: Իտալական որինակից դատելով, մենք կարող ենք հասկանալ, թե ինչ է սպասում այն յերկրներին, ուր ֆաշիզմն է հաղթանակել:

ՖԱՇԻՍՏՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Մենքն էլ լսել են իտալական ֆաշիստների և նրանց պարագլուխ Մուսոլինու մասին: Ինչ տարի յե արդեն—1922 թվից—նրանք կառավարում են Իտալիան: Ինչպես նրանք անցան իշխանության գլուխ:

1914 թվին սկսվեց համաշխարհային պատերազմը: Իտալիան սկզբում մի կողմ քաշվեց: Մուսոլինին—այն ժամանակ օոցիալիստ էր—դուրս յեկավ պատերազմի գեմ: Սակայն իտալական բուրժուազիայի մի մասը, պողպատաձուլական և յերկաթագործական գործարանների տերերը—ուղղում էին պատերազմ, Վորովհետև սպասում էին, Վոր նրանց գործարանները բանակի համար հրազեններ, ռազմամթերքներ և թնդանոթներ են պատրաստելու և այդ մեծ ոգուտ է բերելու: Այս գործարանատերերը պատերազմի ոգտին ազդեցությամբ էին մղում: Բացի դրանից, բուրժուազիայի մի մասը հույս ուներ, Վոր հաղթելու դեպքում Իտալիան նոր յերկրներ կտանա:

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, Վոր կապիտալիստները չէին խոսում իրենց շահերի մասին, այլ նրանք ստանում էին, Վոր պատերազմը շատ մեծ ոգուտ կտա ամբողջ

Իտալիային: Յեվ նրանց հաջողից համոզել օրհնում մանր բուրժուազիայի մի մասին: Այն ժամանակ Մուսուլինին և նրա մոտիկ բարեկամները (նույնպես սոցիալիստներ) դաժանեցին բանվորներին և կուսակցության և սկսեցին պատերազմի համար ազիտացիա տանել: Այդ ազիտացիայի նպատակով Մուսուլինին ստեղծեց խմբակներ, մտափորագես բլիշներ Նման և նրանց անվանեց «Ֆաշիս», զոր իտալերեն նշանակում է փունջ, կապ: Սրանից առաջացավ «Ֆաշիստ» բառը:

1915 թվին Իտալիան խառնվեց պատերազմին և անցավ Անգլիայի և Ֆրանսիայի կողմը՝ ընդդեմ Գերմանիայի և Ավստրիայի: Նրա դաշնակիցները նրան շատ սպառնալիքներ խոստացան հաղթելու դեպքում: 1818 թվին պատերազմը վերջացավ: Իտալիան և նրա դաշնակիցները հաղթեցին: Բայց նրանք խաբեցին նրան: Իտալիան չտուգացավ այն, ինչ խոստացել էին իրեն:

Այդ ժամանակամիջոցում յերկրի ներսում տնտեսութունը քայքայվեց: Բոլոր գործարաններն աշխատում էին պատերազմի համար: Գյուղը չէր կարող վոչ մի առիթ ինվենտար գնել: Բացի դրանից, բոլոր աշխատանքակազմաբարձր պատերազմի գնացին: Գյուղատնտեսութունն ընկավ: 1915 թվին ցորենը հավաքվել էր 46 միլիոն ցենտներ, իսկ 1917 թվին—38 միլիոն: Յեզիպտացորենը 1915 թվին—31 միլիոն, իսկ 1917 թվին—21 միլիոն ցենտներ: Մանածագործական ապրանքները 2 անգամ ավելի քիչ էին արտադրվում: Աճեց միայն յերկաթի, չուգունի և պողպատի հանույթը, վորովհետև նրանք ուղարկվում էին դեմագործարաններ:

Արտադրվում էր	1913 թ.	1917 թ.
	(հազար տոննով)	
Յերկաթ	603	999
Չուգուն	427	471
Պողպատ	989	1332

Գործարանատերերի հաշիվը ճիշտ դուրս յեկավ, պատերազմը նրանց մեծ շահ տվեց: Սակայն յերբ նա վերջացավ, վերջացան նաև ռազմական պատվերները, իսկ տնտեսութունը քանդված էր: Յեվ արդյունաբերութունը կանգ առավ:

Արտադրվում էր	1917 թ.	1919 թ.	1921 թ.
	(հազար տոննով)		
Յերկաթ	999	619	279
Չուգուն	471	240	61
Պողպատ	1332	733	714

Գործարանները փակվեցին, գործազրկութունն աճեց: Նա հարվածեց թե բանվորներին, թե բատրակներին և թե ծառայողներին: Քաղաքներում բանվորներն սկսեցին գործադուլ անել: 1920 թվին տեղի ունեցավ 2070 գործադուլ, վորոնց մասնակցեցին 2 միլիոն 300 հազար բանվորներ: Գյուղերում կազմակերպվեցին բատրակների «կարմիր միություններ»: Գյուղացիներն սկսեցին «գրավել կալվածատիրական հողերը: Իսկ 1920 թվին, աշնանը, իտալական բանվորները շատ գործարաններ խլեցին և սկսեցին ստեղծել կարմիր զվարդիա: Մանր բուրժուազիայի զգալի մասը, քայքայված և անբավական լինելով, պատրաստ էր միանալու բանվորներին: Թվում էր, թե Իտալիայում շուտով խորհրդային իշխանութուն է լինելու:

Սակայն սոցիալիստական կուսակցութունները վախկոտ ղեկավարները քանդեցին գործը: Նրանք ապստամբ բանվորների գլուխը չկանգնեցին: Նրանք չպաշտպանեցին և չաջակցեցին իտալական չքավորության կոչին՝ կալվածատիրական հողերը գրավելու մասին: Նրանք վախեցան հեղափոխությունից և համաձայնության յեկան կառավարության հետ: Կառավարութունն այնպես էր ձևացնում, վոր իբր թե զիջումների համաձայն է: Իսկ սոցիալիստները համոզում էին բանվորներին համաձայնվել զիջումներին:

Ղեկավարները դավաճանեցին, իսկ հեղափոխութունը առանց ղեկավարութեան մնալով տապալվեց, զորութեամբ մի առժամանակ գլուխը կորցրեց, չէր իմանում ինչ անել: Իսկ մանր բուրժուազիան վոչ միայն հեռացավ հեղափոխութունից, այլ նաև խիստ չարացավ «այս սոցիալիստներին» դեմ, վորոնք միայն շատախոսում եյին և վոչինչ չեյին անում:

Այս բոլորը ճարպիկութեամբ ոգտագործում եյին ֆաշիստները: Նրանք ասում եյին, վոր ամեն ինչի մեղավորը պարլամենտն է, վորտեղ զանազան կուսակցութեանները գլուխ են իրար, փոխանակ հայրենիքին ծառայելու Ֆաշիստներն ասում եյին, վոր պետք է լինի միայն մի կուսակցութուն, վորպեսզի նա մի անգամից պաշտպանի ամբողջ ժողովրդի շահերը: Նրանք մանր բուրժուազիային լաւում եյին սոցիալիստների դեմ, ասելով, վոր նրանք միայն շատախոսել և գործադուլներ կադմակերպել գիտեն, իսկ այդ գործադուլներին վոչ մի ոգուտ չկա, միայն անգործութունն են վրդովում. սա հացթուխներն են գործադուլ անում—առանց հացի յես մնում. սա յերկաթուղայինները կամ Եւրամիայի բանվորներն են գործադուլ անում—վոտքով ես դնում: Ֆաշիստներն ասում եյին, վոր պատերազմից հետո զրկեցին, խաբեցին Իտալիային, իսկ այժմայն կառավարութունն անկարող և պաշտպանել Իտալիան այս վիրավորանքներից և ֆնսանքներից, պետք է նոր, ուժեղ կառավարութուն: Ֆաշիստներն ասում եյին, վոր իրենք դեմ չեն բանվորներին, այլ դեմ են միայն սոցիալիստներին և հրեաներին, վորոնք (հրեաները) սպեկուլացիա յեն անում և զրանից ել հասարակ մարդիկ վատ են ապրում:

Ֆաշիստներին ամենից առաջ միացան նախկին սպաները, վորոնք պատերազմից հետո ապաստանելու տեղ չունեյին, հետո միացան շատ ծառայողներ, կալվածատերերի վորդիներ, կուլակներ: Ֆաշիստական ջոկատներն սկսեցին

սպանել հեղափոխական բանվորներին, բատրակներին, չքավորներին: Կալվածատերերը և խոշոր բուրժուազիան տեսնում եյին յերկու բան. նախ, վոր մանր բուրժուազիայի և նույնիսկ հետամնաց բանվորների զգալի մասը, հեռանալով հեղափոխութունից, ուրախութեամբ հնազանդվում, յենթարկվում եյին ֆաշիստներին, յերկրորդ, այն, վոր ֆաշիստները գիտեն անխնայորեն պայքարել հեղափոխական բանվորների դեմ: Տեսնելով այս, կալվածատերերն և գործարանատերերն սկսեցին ուժեղ կերպով պաշտպանել և աջակցել ֆաշիստներին, մատակարարելով նրանց փող, մթերք և զենք: Ֆաշիստները կամաց-կամաց ահագին պաշտոններ զբաղեցին պետական սպարապետ և բանակում, զենք հավաքեցին և մի քանի հարյուր հազար մարդ վորսացին իրենց կադմակերպութունները:

Ինչքան շատ ուժեղացան ֆաշիստները, այնքան ավելի սանձարձակ դարձան: Կառավարութունը ձեռնարկում եր, վոր իբր թե կովում և նրանց դեմ, այն ինչ գաղտնի կարգադրութուններում հրամայում եր իշխանութուններին ողնել ֆաշիստներին: 1922 թվին բանվորները գործադուլ հայտարարեցին ամբողջ Իտալիայում, պահանջելով կառավարութունից զանդաղեցնել ֆաշիստական սպանութունները և բռնութունները: Այս գործադուլը ջախջախվեց: Նախ վոր բանվորների մեջ չկար այն վողեւորութունը, ինչ վոր 1920 թվին: Յերկրորդ, վոր գյուղացիութունը չէր հավատում սոցիալիստներին, վորովհետեւ նրանք 1920 թվին չաջակցեցին իրան հողի համար մղած պայքարում: Յերրորդ, ֆաշիստները 1920 թվին ունեյին արդեն հսկայական կադմակերպութուն, ունեյին իրենց բջիջները գործարաններում: Ֆաշիստների մեջ կային և՛ ինժեներներ, և՛ տեխնիկներ, և՛ նույն իսկ մի մաս բանվորներ: Դրա համար ել յերբ գործադուլն սկսվեց, ֆաշիստներն իսկույն զբաղեցին գործարաններն ու յերկաթուղագծերն իրենց ջոկատներով,

ջախջախեցին դործադուլավորներին, իսկ իրենք կարողացան գործի գցել այն բաղմաթիվ գործարաններն և յերկաթուղագծերը, վորոնք լքված էին բանվորների կողմից: Գործադուլը խորտակված էր: Դրանից հետո ֆաշիստների ուժն ու փառքն էլ ավելի աճեց և հենց նույն տարուժ, 1922 թ. հոկտեմբերին, ֆաշիստները զբաղեցին իշխանությունն ի տալիսյուն: Ժիշոն ասած, նրանք չգրավեցին իշխանությունը, այլ բուրժուազիան ինքն էր, վոր պիտակցաբար նրանց իշխանության գլուխ կանգնեցրեց, վորպես իր հավատարիմ ծառաների:

Ճշմարիտ է, նախ քան իշխանությունը զբաղելը, ֆաշիստները պահանջում էին ավելացնել հարկերը կապիտալի վրա, նույն իսկ բաց թողեցին «հողը—աշխատավորներին» լողունը: Բայց այս բոլորը խոսքեր էին միայն: Իսկ բուրժուազիան սովորել էր գործից դատել: Ֆաշիստական գործերը նրանք ձեռնում էին: Իտալական դործարանատերերն իրենց համազումարում հայտարարեցին, վեր իրենք «չնորհակալ են ֆաշիզմից նրա համար, վոր նա աղատեց նրանց բոլշևիզմի և գործադուլների սարսափներից»: Իսկ յեթե բուրժուազիային ձեռնառու գործերը շուտի խոսքերով էին քողարկվում, ապա զրանից բուրժուազիան նույնպես զոհ է. թող այդ խոսքերը զբաղիչ լինեն սնդիկատից մասսաների համար: Բուրժուազիան զոհ է հաճկապես նրանով, վոր ֆաշիստներին հաջողվեց իրենց կողմը գրավել մամռ բուրժուազիային և ստեղծել դահիճների, հեղափոխության կազմակերպություններն ահաբեկողների և նրանց ղեկավարներին սպանողների ջոկատներ:

Մանր բուրժուազիան կարծես ճորդի վրա ճոճվելիս լինի պրոլետարիատի և խոշոր բուրժուազիայի միջև: Յերբեմն նա պատրաստ է պրոլետարիատի հետևից գնալու, մեկ էլ տեսար հեռանալով նրանից, փախցում է նրան խեղդելու գործում: Մանր սեփականատերը վատ է ապրում, դրա

համար նա անբավական է. բայց ինչ էլ վոր լինի, նա սեփականատեր է և կառչում է իր սեփականությանը: Նա անվերջ դժգոհ է. բայց հաճախ չի հասկանում իր ոգուտը: Յերբ պրոլետարիատը կարողանում է բացատրել մանր բուրժուազիային, թե ինչու համար ձեռնառու չե նրան իրեն կողմն անցնել, ապա այդ դեպքում նա հեղափոխական ուժ է դառնում պրոլետարիատի ձեռքին: Իսկ յերբ նա վախեցած է լինում հեղափոխությունից, մանավանդ այն ժամանակ, յերբ նա խորտակված է, ապա նա դառնում է հակահեղափոխական ուժ բուրժուազիայի ձեռքում:

Իտալական ֆաշիստներին հաջողվեց իրենց շուրջը կազմակերպել մանր բուրժուազիային և նետել նրան պրոլետարիատի դեմ: Ահա սա յե նրանց գլխավոր ծառայությունը բուրժուազիայի հանդեպ և դրա համար նա նրանց դրեց իշխանության գլուխ:

ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Իշխանության գլուխն անցնելով, ֆաշիստներն ուժի նման շուտ-շուտ փոխում են իրենց կաշին: Բուրժուազիան իշխանություն տվեց նրանց միայն նրա համար, վորպեսզի նրանք ծառայեն իրեն: Յեվ նրանք ծառայում են:

Իտալիայում արդյունաբերությունը կանգ առավ: Ինչպե՞ս վերականգնել նրան: Ի՞նչնե՞ր գործարանների յեկամուտները: Խոշոր ձեռնարկությունները պետություն հանձնել: Գործարաններում բանվորական հսկողություն մտցնել: Այս բոլորի մասին ֆաշիստները խոսում էին նախ քան իշխանության գլուխ անցնելը: Բայց սա լոկ խաբեբայություն էր: Հենց վոր իշխանությունն իրենց ձեռքն առան, ֆաշիստները ճնշեցին բանվորներին և հնարավորություն տվեցին գործարանատերերին ի՞նչնե՞ր աշխատավարձը: Ժիշո է, բանվորները կարողանում էին գործադուլ անել, բայց ֆաշիստներն ահաբեկում և ջարդ ու փշուր էին անում

գործադուլավորներին: Գործադուլներին մասնակցեցին — 1920 թվին 2.314 հազար մարդ, 1921 թ.—734.000, 1922 թ.—448.000 և 1923 թ.—միմիայն 66.000: Սակայն չնայած ֆաշիստական բռնություններին, այնուամենայնիվ 1924 թվից գործադուլներ թիվը նորից սկսեց աճել: Այն ժամանակ ֆաշիստական կառավարությունը հրատարակեց մի որոշում, վոր արգելում էր գործադուլը 2 տարվա բանտարկության և 1000 լիրայի (100 ուլբլի) տուգանքի սպառնալիքով: Ճիշտ է, ֆաշիստները միաժամանակ արգելում էին լոկաուտները (լոկաուտ նշանակում է գործարանի փակում և բանվորների արձակում, յերբ տերն ուղում է ատիպել բանվորներին համաձայնվել աշխատավարձի իջեցման): Բայց սա լոկ խաբեբայություն էր, վորովհետև, նախ վոր լոկաուտները պետք չեն տիրոջ. քանի վոր բանվորները չեն կարող գործադուլ անել, ապա նա առանց լոկաուտի յեւ կստիպի նրանց համաձայնվել իր պահանջներին. յերկրորդ, վոր բուրժուազիան կարող է և չգործադրել ֆաշիստական որոշումը. չի վոր այդ իշխանությունը իրեն և պատկանում է ֆաշիստներն անում են այն ամենը, ինչ ինքն և հրամայում:

Զրկվելով գործադուլ անելու իրավունքներից, բանվորները չեյին կարողանում պաշտպանել իրենց շահերը և նրանց աշխատավարձն իջավ: Յեթե բանվորների մինչպատերազմյան ռեալ աշխատավարձը հաշվենք 100 տոկոս, ապա նա հետո հավասարվեց 1922 թվին—102 տոկոսի, 1923-ին—97 տոկոսի, 1924-ին—91 տոկոսի, 1925-ին—86 տոկոսի, 1927-ին—70 տոկոսի, իսկ 1928 թվին աշխատավարձը նորից իջավ:

Իսկ այդ ժամանակամիջոցում արեստների կապիտալն աճեց 20-ից մինչև 40 միլիարդ լիրա (լիրան հավասար է 10 կոպեկի): Բանվորների վաստակը պակասեց, իսկ բուրժուազիայի յեկամուտը բարձրացավ: Ֆաշիզմը բուրժուական

իշխանության ձեռքին մի լավ մեքենա յե, վորով նա բանվորական արյունը մղում է կապիտալի վոսկյա վորովա՜նը:

Ֆաշիստական Իտալիայում աշխատավարձը սոսկալիցած էր Մանածագործներն ամսական վաստակում են մոտ 380 լիրա (38 ուլբլի): «Մոնտեկատինի» հսկա գործարաններում ազամարդկանց վճարում են որեկան 12 լիրա (1 ո. 20 կ.), իսկ կանանց—6 լիրա (60 կոպ.): Իրնձի աղորիքներում բանվորներն այժմ աշխատում են 13-ական ժամ, իսկ աշխատավարձն առաջվա համեմատությամբ պակասել է 30 տոկոսով: Ի՞նչ է նաև բատրակների աշխատավարձը, իսկ բատրակուհիներն և անչափահասները նույնիսկ 40 տոկոս պակաս են ստանում, քան առաջ:

Իսկ միևնույն ժամանակ ֆաշիստները հայտարարում են վողջ աշխարհի առաջ, վոր նրանք համաժողովրդական իշխանություն են: Այն, ինչ վոր նրանք անում են, դա վոչ թե բուրժուազիայի ոգտին է, այլ ամբողջ Իտալիայի: Նրանք տոտում են, վոր ժողովուրդը հասկանում է այդ և հավատում է իրենց, դրա համար էլ նա պատրաստ է կամավոր կերպով տանելու բոլոր դժվարությունները, միայն թե ոգնի իր «հայրենիքին»: Յերբ ֆաշիստները վերացրին 3 ժամյա բանվորական որը, Մուսոլինին ասաց՝ «Յես գիտեմ, վոր յեթե յես առաջարկեյի խաղական ժողովրդին աշխատել վոչ թե 9, այլ 10 ժամ, ապա նա միաբերան կարճադանքեր այդ առաջադրությունը»:

Ֆաշիստների խեղկատակությունը մինչև այն աստիճանին է հասնում, վոր նրանք ասում են, իրբ թե բանվորները «կամավոր կերպով» իրենք իրենց են բարձրացնում բանվորական որը և իջեցնում աշխատավարձը: Ֆաշիստները սա է խաբեբայություն մեծ վարպետներ են: Յերբ 1927 թվին բուրժուազիային պետք յեղավ բանվորների աշխատավարձը 10 տոկոսով իջեցնել, այն ժամանակ ֆաշիստները ձեռնարկեցին այդ գործին մեծ յեռանդով: Մի

անդամ թերթերում լուր և պատվում, թե շրջաններից մեկում (Պաղուսյում) բառարկները վորոշել են իրենք իրենց իջեցնել աշխատավարձը: Մի փոքր ժամանակ անց, թերթերը նորից են տպում մի քանի այդպիսի լուրեր: Իսկ հետո ֆաշիստական պրոֆմիսթյունը հայաարարեց, վոր պեճ և «վերադնահատել աշխատանքը» և իջեցնել բոլոր բանվորների աշխատավարձը:

Սակայն ֆաշիստները չեն ստիճանափուկվում միայն աշխատավարձի իջեցումով և բանվորական որվա բարձրացումով: Ֆաշիստներն իրենց իշխանության մի քանի տարիների ընթացքում կրկնակի և յոռակի բարձրացրին տնտեսական հաճախությունը (այսինքն հարկեր ապրանքների վրա, որինակի համար, շաքարի, սապոնի և այլն): Մասնաշխատող գործածության ապրանքների վրա դրված հարկերը 1921 թ. պետությանը տվին 1.596 միլիոն լիրա, իսկ 1926 թ. — 2.517 միլիոն: Մաքսերը արտասահմանից ներմուծվող ապրանքների վրա) հենց նույն ժամանակամիջոցում բարձրացան 3 անգամ — 896-ից մինչև 2.877 միլիոն, ըստ վորում ֆաշիստները խոշոր մաքսեր նշանակեցին ներմուծվող հացի վրա: Իսկ Իտալիան տարեկան ներմուծում է մոտ 20 միլիոն ցենտներ հաց: Հացի վրա մաքսեր նշանակելը ձեռնադրեց միայն կալվածատերերին և կուլակներին, վորոնք միանգամայն բարձրացրին իրենց հացի դինը: Սա հարված հասցրեց վոշ միայն բանվորներին և բառարկներին, այլ նաև գյուղացիներին մեծամասնությունը, վորովհետև իրենց հացը իրենց չէր բավականանում և ստիպված էին գնելու:

Կողոպտելով աշխատավորներին, ֆաշիստները չեն եղ մտածում մտնել հարուստների խոր գրպանները: Ընդհակառակը, ֆաշիստներն ամեն կերպ աշխատում են ազատել նրանց պետությունը պահելու ծախսերից: Հինգ տարվա ընթացքում ֆաշիստներն ավելի քան կրկնակի իջեցրին հարկերն անշարժ կալվածների և ռենտայի վրա (ռենտան —

դա կալվածատերերի հողից ստացած յեկամուտն է): Ֆաշիստները բոլորովին վերացրին ժառանգության հարկերը, վորոնք առաջ պետությունը տարեկան տալիս էին մի քանի հարյուր միլիոն: Նախ քան իշխանությունն իրենց ձեռքն առնելը, ֆաշիստները, տեսնելով, վոր դժգոհություն ածում է հարուստների դեմ, վորոնք պատերազմի ժամանակ ահադին գումարներ էին վաստակում, պահանջում էին խոշոր հարկեր նշանակել այն հասույթների վրա, վորոնք պատերազմից էին ստացվում (որինակ, բանակի համար հագուստ և կոշիկ մատակարարելուց), պահանջում էին նույնիսկ գրավել այն կալվածները, վորոնք ձեռք էին բերված պատերազմի ժամանակ: Իշխանության գլուխ կոնգրեսով, ֆաշիստ ստախոսները ճիշտ հակառակը վարվեցին. 1921 թվին պետությունը պատերազմական հասույթներից վերցնում էր 1.444 միլիոն հարկ, իսկ 1926 թվին, ֆաշիստների որոշ — միայն 547 միլիոն, պատերազմի ժամանակ վաստակած կալվածներից առաջ ստացվում էր 325 միլիոնի փոխարեն: Սակայն կառավարությունն իր ծախսերը չպակասեցրեց, այլ ավելացրեց, մասնավորապես բանակի, վստիկանություն և հատուկ «ֆաշիստական միլիցիայի» ծախսերը: Վերադարձվեց վերցնել վորոշ վերցնում էին տեղաշարժվորներից՝ ապրանքների վրա տուրքեր ավելացնելու միջոցով, հետո յերկաթուղայինների և պետական ծառայողների ամսականները կրճատելու, ինչպես նաև ստիպողությամբ խառնություն տարածելու միջոցով:

ՏԱՇԻՍՏՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ֆաշիստներն ասում են, վոր իրենց պետությունը իշխանությունը վորեն դասակարգի չի պատկանում:

79-90809

НИИ СТИПТА
ДОСТОПОВЕДЕНИЯ
Академия наук
СССР

այսպիսի պետութիւն զոյգութիւն չունի: Այն, ինչ մենք պատմեցինք Խառլիայի մասին, դրանից ընթերցողը պարզ գաղափար կարող է կազմել, թե վճիռ դասակարգին և պատկանում իշխանութիւնը—խոշոր բուրժուազիային, կալվածատերերի հետ միասին:

Ուրիշ բուրժուական պետութիւնների հետ համեմատած, Խառլիայում «նորութիւնը» կայանում է նրանում, վոր ֆաշիստները վոչնչացրին նախկին պարլամենտը, ընտրութիւնները նախկին կարգը և փոխարինեցին իրենց սեփական շարքամենտով: Խառլիայի պարլամենտը կազմվում է արհմիութիւնների ներկայացուցիչներից: Իսկ այդ արհմիութիւնները ֆաշիստական են: Ահա սրանումն է զաղանկը: Ֆաշիստները ցրեցին առաջվա արհմիութիւնները և ստեղծեցին նորերը, իրենց սեփականը: Յեթե այսպիսի միութեան մեջ մտնում է բանվորների միայն մի տասներորդ մասը, ապա միութիւնն իրավունք ունի կոլլապսման գիր կնքելու տիրոջ հետ՝ մնացած բոլոր բանվորների անունից: Միութիւնների նախագահները և քարտուղարները հաստատվում են կառավարութեան կողմից: Իհարկէ, այս միութիւնների ղեկավար մարմինների մեջ մտնում են միայն ֆաշիստները:

Տերերը նույնպէս ունեն իրենց արհմիութիւնները: Յե՛վ ահա, պարլամենտի ընտրութիւնների ժամանակ գործարանատերերի միութիւնները նույնքան թեկնածուներ են ազաջարկում, ինչքան բանվորական միութիւնները: Ֆաշիստները սրանով շատ են հպարտանում և ասում, վոր իրենց մօտ բոլորը հավասար են: Բայց իրականում արդյունաբերող տերերի միութիւնը ներկայացնում է 96 թեկնածու, իսկ արդյունաբերական բանվորների միութիւնը՝ նույնպէս 96: Սակայն տերերի միութիւնը բազկացած է 60 հազար մարդուց, այնինչ բանվորական միութեան մեջ կա 1 միլիոն 200 հազար մարդ: Վերտեղ է համաարութիւն-

ներ Բացի այդ, «բանվորական» ֆաշիստական արհմիութիւններից առաջարկվում են այն թեկնածութիւնները, վորոնք ձեռնառն յեն ֆաշիստներին: Սակայն նույնիսկ այս խզնուկ պարլամենտն էլ չունի վոչ մի իրավունք: Որինակի համար, պարլամենտն իրավունք չունի վորեւէ գործ քննադէկլու առանց կառավարութեան թույլտվութեան:

Խառլիայում բոլոր հեղափոխական թերթերն արգելված են: Կոմունիստական կուսակցութիւնն ընդհատակյա յէ աշխատում: Կոմունիստներին բռնում են հազարներով, սպանում կամ յենթարկում սոսկալի տանջանքների: Մղանում և անդամահատում են վոչ միայն կոմունիստներին, այլ նաեւ այն ամեն բանվորին, բատրակին, դյուղացուն, վորը համարձակվում է թեկուզ մի խոսք ասել ֆաշիզմի դեմ: Վոչ միայն գատարանն ու վոստիկանութիւնն են անում այս բոլորը, այլ և կամավոր ֆաշիստների հատուկ ջոկատները: «Ֆաշիստական միլիցիայում» կա 300 մարդ—նախկին սպաներ, կալվածատերերի վորդիններ, կուլակներ, առևտրականներ, դատարկապուրտ թափառաշրջիկներ և այլ խառնուրդներ: Այս ավազակախումբը լավ զինված է, լավ կերակրվում է և, գլխավորը, գիտէ թե ում պետք է խեղդել:

Յերկիրը կառավարում է ֆաշիստական կուսակցութիւնը: Նրա կազմը շատ խայտաբղետ է: 1921 թվին ֆաշիստական կազմակերպութեան մեջ կային 18 հազար կալվածատեր, 4.000 արդյունաբերող, 14.000 առևտրական, 10.000 ինտիլեգենտ, 22.000 ծառայող, 23.000 բանվոր, 37.000 դյուղացի: Սա այսպէս էր նախ քան իշխանութիւն գրավելը: Այժմ ֆաշիստների կուսակցութիւնը մեծ մասամբ բաղկացած է մանր բուրժուաներից և ծառայողներից: Որինակի համար, Վեռոնում ֆաշիստական կազմակերպութեան մեջ կան 186 գործարանատեր, առևտրական և այլն սեփականատերեր, 585 ծառայող և ինտելեգենտ, 25 սպա: Ռեշիո ֆաշիստները ամեն մի 100 ֆաշիստին ընկնում է 80 ծա-

ռաջող, 10 ինստիտուտ, 5 ուսանող, 3 առևտրական, 2 բան-
վոր: Հստի շրջանում ֆաշիստների 63 տոկոսը ծառայողներ,
ինտելեկտուալներ են, 18 տոկոսը—բանվոր, 10-ը գյուղացի,
5-ը ուսանող և 3 տոկոսն էլ բուրժուաներ: Տրենտոյում
ծառայողներ 3500, բուրժուաներ 2.500, ուսանողներ 700,
բանվոր և գյուղացի 2.800:

Բանվորների և գյուղացիների մի մասը դուռով են
խցիկել ֆաշիստական կուսակցության մեջ, ուրիշներն իրենց
ցանկությունները մտել, վորպեսզի հեշտությամբ կարողանան
աշխատանք ձգել: Միայն կիսագիտակից բանվորների շատ
չնչին ժամանակ, վոր դեռ հավատում և ֆաշիստներին:

Բայց ֆաշիստական կուսակցությունը ղեկավարում են
կալվածատերերը, գործարանատերերը, իրավաբանները և
նախկին սոցիալիստներից մի քանիսը, վորոնք իրենց գլու-
խները գրավ են դրել թշնամուն:

Ֆաշիզմի ղեկավարներն այնպիսի քաղաքականություն
են վարում, վորը ձեռնտու չի խոշոր կապիտալին—բանկիր-
ներին և բուրժուազիային այլ ֆինանսական և արդյունաբե-
րական թաղադուրկ թաղավորներին: Մուսոլինին ասել է.
«Մենք պետք է հաշտվենք այն մտքի հետ, վոր կապիտա-
լիզմը դեռ գոյություն պիտի ունենա մի քանի դարեր»: Դերմանիայի և այլ յերկրների խոշորագույն բանկիրները
հսկայական գումարներ են շաղյուծ, ֆաշիստական հերյու-
րանքները պաշտպանելու և նրանց ջոկատները, թերթերը
և ղեկավարներին պահելու համար: Իր տված փողը համար
բուրժուազիան, ի միջի այլոց, պահանջում է ֆաշիստների
գլուխը կանգնեցնել «իբ մարդեկանց»: Նրա համար միևնույն
է, թե ովքեր են այդ մարդիկ. իշխան, գործադուրկ ոֆիցեր,
կաշառված ժուրնալիստ, կալվածատերի վորդի, պրոֆեսոր
կամ նախկին սոցիալիստ. բուրժուազիայի համար կարևորն
այն է, վոր այդ մարդիկ նախ և առաջ ստիպեն շարքային
ֆաշիստներին յենթարկվել և հնազանդվել, և յերկրորդ—

վոր ֆաշիստական պարագլուխները տանեն այնպիսի քա-
ղաքականություն, վոր ձեռնտու, պետքական և արդյունա-
վետ լինի իրեն, բուրժուազիայի համար:

Ուռնացած ֆաշիստական կուսակցության մեջ լիակա-
տար միասնականություն չկա: Այդպիսին չի յե կարող
լինել, քանի վոր նրա կազմը շատ խալաթաբեղտ է:

Քանի դեռ ֆաշիստները նոր էյին անցել իշխանու-
թյան գլուխ, «մանր ժողովուրդը» հավատում էր նրանց
խոստումներին, հավատում, վոր ֆաշիստները պատ-
րաստ են ծառայելու «վողջ ժողովրդին», հետև-
բար պաշտպանելու և «մանր ժողովրդին»: Բայց հետո
մարդիկ տեսան, վոր ֆաշիստները թեքվում են բուրժուազի-
ական կողմը: Այն ժամանակ դժգոհությունն ակավեց:
Մանր բուրժուազիայի մի մասը հասկացավ, վոր բարի
հովիվը զայլ գուրս յեկավ, բայց արդեն ուշ էր:

Մանր բուրժուազիան իր հետին խելքովն է ուժեղ:

Տեսնելով մանր բուրժուազիայի դժգոհությունը, ֆաշիստ
ղեկավարներն իրենց սերտ «բարեկամությունը» նրա հետ
վերականգնելու նպատակով, յերբեմն նրան գցում էյին վո-
րեկ վողորմություն: Որինակ, մի քանի տարի առաջ իտա-
լական կառավարությունն արգելեց տնտեսներին բարձրաց-
նել բնակարանավարձը: (Իսկ Դերմանիայում մինչև իշխա-
նությունը գրավել ֆաշիստները տեղ-տեղ կազմակերպում
են մանկամուրներ, կառուցում են եփան տներ, ձեռունի-
ների համար ապաստարան...): Մակայն խոշոր կապիտալիստ-
ների շահը պաշտպանելով, իտալական ֆաշիստները մի ձեռ-
քով վողորմություն են տալիս մանր բուրժուազիային, իսկ
մյուսով բռնում են նրա կողորդը: Որինակ, իտալական ֆա-
շիստական կառավարությունը, աղատելով խոշոր կապիտա-
լը տուրքերից, միևնույն ժամանակ հարկ նշանակեց միջին
յեկամուտի վրա 600 լիրայի (60 ոուրլի) չափ մի ամսում:

Պարզ է, վոր այս տուրքը հարվածեց մանր և միջին բուրժուազիային:

Թողոր կապիտալիստները և մանր բուրժուազիայի (խսկ ամենից ավելի բանվորները) միջև յեղող հակամարտութուններն անդարդաւնում էյին, իհարկե, նաև ֆաշիստական կուսակցության ներսում: Որինակի համար, Իտալիայում այս կուսակցության կադմակերպութուններից մեկում վեճ առաջացավ, թե պետք է արդյոք ապրանքների գները բարձրացնել թե լոչ: Գործարանատեր ֆաշիստները պահանջում էյին բարձրացնել գները, իսկ արհեստավոր և ծառայող ֆաշիստները պահանջում էյին, ընդհակառակն, իջեցնել: Մի այլ կադմակերպության մեջ ֆաշիստական կուսակցության մանր բուրժուա անդամները չէյին ուղում խողոր կապիտալիստներին և կալվածատերերին կուսակցության ղեկավարչական պոստերում ընտրել և ըզավում էյին՝ կորչեն հաստատվոր պորտաբույծները...

Ֆաշիստական կուսակցության մեջ ուժեղ միտանականութուն չկա: Բայց քանի դեռ գյուղացիության, մանր բուրժուազիայի և հետամնաց բանվորության մի մասը շարունակում է վախենալ հեղափոխութունից և չի հասկանում, վոր միայն պրոլետարիատի իշխանությունը կարող է նրան ազատութուն տալ, մինչև այդ ֆաշիստները համենայն դեպս դեռ ուժեղ կմնան:

Իտալական ֆաշիստները գլուխը նախկին սոցիալիտական ավաճան Մուսոլինին եւ նա իրեն հետ քաշեց և բերեց իշխանության գլուխ իր մտերիներին, այսինքն այնպիսի ապավաճաններին, ինչպիսին վոր ինքն եւ Սակայն նրանց վոչ վոր չի ճանաչում և նրանք շատ լավ գիտեն, վոր իրենք ուժեղ են միայն նրա համար, բացի դեռ ուժեղ ե Մուսոլինից: «Դրա համար—գրում է Յու. Ջուլիոն*—նրանք մեծ

*) «Ֆաշիստական Իտալիա» հետաքրքիր գրքում, «Մոսկովիկի ռուսի» հրատարակութուն: Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են ավելի մանրամասն ծանոթանալ ֆաշիզմին, նրանք թող կարդան այդ գրքը:

ուրախությամբ ուրանում են իրենց՝ հոգուա Մուսոլինու, առեցնում նրա հեղինակությունը... Ջնայած մեց ամբի յե, ինչ ֆաշիստական կուսակցությունն իշխում է, այնուամենայնիվ նա, բացի Մուսոլինուց, առաջ չքաշեց մի վորեւե այնպիսի անձնավորություն, վորը հեղինակություն և վստահություն վայելեր կուսակցության մեջ կամ նրան մոտիկ շրջաններում: Ամեն տարի մեծանում է Մուսոլինու գերն ու նշանակությունը:

Նրա կենսագրության մասին դպրոցներում յերեխաներին պատմում են հին պառավական հեքիաթներ: Թերթերն ամեն որ նրան դարգարում են նոր նկարագրություններով: Ինքը, Մուսոլինին, ըստ յերեւոյթին, ամենեկին չի ճնշվում իր բացառիկ դիրքով և կիսաաստվածի գերով... Ընդհակառակն, նա միշտ լիքն է ինքնաբավականության զգացումով:

Սյուպիսին է ահա ֆաշիստական «պարագլուխը», «կիսաաստվածը», կալվածատերերի, գործարանատերերի, խանութպանների և կուլակների պաշտպանը:

Խաղաղով իր «համաժողովրդական» առաջնորդի գերը, Մուսոլինին հաճախ խոսում է այն մասին, վոր ֆաշիզմի որք գոյութուն չունի մի դասակարգի ճնշումը մյուսի վրա: Ֆաշիզմի համար բոլորը մեկ են— և՛ կապիտալիստը, և՛ բանվորը, և՛ կալվածատերը, և՛ գյուղացին: Նրանք բոլորը մի հայրենիքի քաղաքացիներ են, նրանցից յուրաքանչյուրն իր բաժինն է բերում վողջ ժողովրդի ողտին: Այսպես է խոսում ֆաշիստական «առաջնորդը», իսկ «բուրժուա կատուն, Վասկան լսում է և ուտում»:

• ԻՏԱԼԱԿԱՆ ՖԱՇԻԶՄԸ ՄԵՆԱԿ ԶԵ

Մենք խոսում ենք միայն իտալական ֆաշիզմի մասին նրա համար, վոր Իտալիայում ֆաշիստներն Չ տարի յե, ինչ կառավարում են և «ծավալվել են» ամենուրեք: Սակայն իտալական ֆաշիզմը մենակ չէ: Որինակ, ֆաշիստներն իշխում

ին նաև մեր արևմտյան հարևան յերկրում—Լեհաստանում։ Պան Պիլսուդսկին նույնպես նախկին սոցիալիստ է, իսկ այժմ լեհական կալվածատերերի և բուրժուազիայի պաշտպանը և «կիսաստվածը»։ Պիլսուդսկին լեհական պարլամենտն անվանում է «պոնիկ» (վոր բալորովին ձիշտ է) և բանտ է նըստեցնում պարոն պատգամավորներին, վորոնք չեն ուզում հասկանալ, վոր բուրժուազիան այլևս նրանց կարիքը չի զգում, քանի վոր նա ուզում է նոր ձևով կառավարել ֆաշիստական ձևով։ Լեհական ֆաշիզմը նույնպես ունի և պետության հաշվին պահում և զահիճների ավազակախմբեր, վորոնք միացել են ղինվորական կազմակերպության «նշանաձիգ» անվան տակ։ Լեհական ֆաշիզմը նույնպես հենվում է մանր բուրժուազիայի վրա, վորն ամեն ինչից անբավական է թեև, բայց և վախենում է հեղափոխությունից և ուզում է, վոր ուժեղ իշխանություն լինի, վորպեսզի «կարգ ու կանոն» լինի, այսինքն գործադուլներ և այլ անախորժ դեպքեր տեղի չունենան, վոր անդորրությունը խանգարվի։ Լեհական ֆաշիզմի, ինչպես նաև իտալական և այլն, գլխավոր խնդիրն է խորտակել հեղափոխական կազմակերպությունները, խորտակել պրոլետարիատին, կոմունիստական կուսակցության, ինչպես նաև գյուղացիության հեղափոխական շարժումները։ Բոլորին հայտնի չի, որինակի համար, թե ինչպիսի արյունարբու վրիժառություն գործադրեց լեհական ֆաշիզմն Արևմտյան Ուկրաինայի ապստամբ գյուղացիներին հանդեպ, վորը (Արևմտյան Ուկրաինա) բռնազավթած է պանական Լեհաստանի կողմից։

Սակայն հատկապես կարևոր է նշել ֆաշիզմի հաջողությունները Գերմանիայում։ Պարլամենտական վերջին ընտրություններին (1930 թվի սեպտեմբերի 14-ին) ֆաշիստներն ստացան 6 միլիոն ձայն, այսինքն ութ անգամ ավելի, քան նախորդ ընտրություններին (2 տարի առաջ)։ Վերադարձնեց առաջացավ այդպիսի հսկայական հաջողությունը

Գերմանիան ապրում է տնտեսական սոսկալի կրիզիս, գործարանները փակվում են։ Յերկրում կա 3 միլիոն գործազուրկ և նրանց թիվը որեցոր աճում է։ Աղքատացած աղքատանկությունը չի կարող ապրանքներ դնել, այդ իսկ պատճառով նրանց գներն ընկնում են։ Խոշոր տրեստները կարող են ապրանքները պահել և սպասել։ Մանր բուրժուազիան չի կարող սպասել, ստիպված է իր ապրանքները ժախել եժառն գներով և դրանից քայքայվում է։ Քայքայվում են նաև արհեստավորները, վորովհետև պատվեր ավելիք և գնորդներ չկան։ Քայքայվում է նաև գյուղացիությունը, վորովհետև գործազուրկներն անկարող են հաց գնել և հացի գներն ընկնում է։ Այդ պատճառով գյուղացիությունը և մանր բուրժուազիան ղժգոն են։

Այս բոլորը ճարպիկությունը ոգտագործում են ֆաշիստները։ Նրանք ասում են, վոր ամեն ինչի մեղավորը «երես կապիտալիստներն» են, մեղավորը պարլամենտն է, մեղավորը կոմունիստներն են, վորոնք իրենց գործադուլներով և «անկարգություններով» քանդում են տնտեսությունը։ Ֆաշիստներն ասում են, վոր պետք է «փրկել Գերմանիան», վոր դրա համար պետք է ուժեղ իշխանություն, վորի ժամանակ չի լինելու բազմաթիվ կուսակցությունների գզգզոց, կովարարություն, այլ լինելու չի միայն մի ֆաշիստական կուսակցություն, վորը հոգալու չի վողջ ժողովրդի բարորություն մասին։ Իհարկե, Ֆաշիստներն իրենց չեն անվանում բուրժուական կուսակցություն։ Նրանք անվանում են իրենց «ազգային-սոցիալիստական դերժանական բանվորական կուսակցություն»։ Նրանք խոստանում են պայքարել չափից դուրս յեկամուսների դեմ, հատկապես լեհականների դեմ։ Նրանք խոստանում են բանվորներին բաժանակցությունը ձեռնարկությունների հասույթներին։ Մանր առևտրականներին խոստանում են աշխատել վարձով առաջ խոշոր վաճառատներ։ Արհեստավորներին խոստանում են

տալ պետութիւնից և քաղաքային վարչութիւններէից ձեռնարկու պատկերներ:

Այս բոլորը դիտարկելով խաբեքայութիւնն և միայն, մինչև իշխանութիւնն ձեռք գցելը: Միեւնոյն ժամանակ ֆաշիստները գաղտնի բանակցութիւններ են վարում խոշոր կապիտալիստներին հետ: Որինակի համար, ընտրութիւններէից մի ամիս առաջ (1930 թ. ոգոստոսին) գերմանական ֆաշիստների պարագլուխ Գիտլերը գաղտնի տեսակցութիւն ունեցած արդիւնաբերողների հետ և նրանց խոստացած, վոր յետքի իշխանութիւնն գլուխն անցնի, ավելացնելու յետ քանվարական որը և հասցնելու յետ 10 ժամի, վերացնելու յետ գործազուրկների նպաստները, պակասեցնելու յետ հաբկերը, կապիտալի վրա:

Գերմանական խոշոր բուրժուազիան գաղտնի կերպով ղեկավարում է ֆաշիստների բոլոր գործերը և նրանց փող և մատակարարում: Նրան հարկավոր է, վորպեսզի ֆաշիստները խաբեքայութեամբ իրենց շարքերը զրավեն ավելի մեծ թվով գյուղացիներ, մանր բուրժուազիային, ծառայողներին, մասամբ գործազուրկներին և հետամնաց բանվորներին, վորպեսզի վանդակի մեջ սեղմեն հեղափոխական պրոլետարիատին:

Յեւ պահա գերմանական ֆաշիստները քիչ-քիչ իրենց մարդկանց առաջ են քաշում զանազան պաշտոնների մեջ թե պետական տպարատում և թե բանակում, ամբողջ յերկրում ստեղծում են ղինապահեստներ, իրենց ղինված ջոկատներում վարում են ամեն տեսակի խառն ամբոխներ:

Այդպես և պատրաստվում գերմանական ֆաշիզմն իշխանութիւնը գրավելուն: Այսպես և տեղի ունենում նաև շատ ուրիշ յերկրներում: Ինչպես ասել ենք գրքիս սկզբում, ֆաշիզմի ուժը զանազան յերկրներում միահավասար չէ: Ֆաշիզմն արագութեամբ զարգանում է այն յերկրներում, վորտեղ մյուս յերկրներից ավելի յերկար և ավելի շատ են

ապրել տնտեսական քայքայում և հեղափոխական ղեկերը:

Կարելի չէ թվել մի քանի յերկրներ, ուր ֆաշիզմը փոքր միայն խոշոր հաջողութիւններ է ձեռք բերել, այլև դուրս է բուրժուազիայի պետական իշխանութեան մշտական ուղեկից—Հոնզարիա, Ռումինիա, Հարավ-Սլավիա, Ֆինլանդիա, մյուս յերկրների անունները մենք տվել ենք արդեն: Կան և այնպիսի պետութիւններ, վորտեղ ֆաշիզմն առայժմ համեմատաբար թույլ է զարգացել: Այդպիսին է, որինակ, Ֆրանսիան, վորը ղեռ ինչպես պետքն է չի զգացել համաշխարհային տնտեսական կրիզիս, բացի դրանից, պատերազմից հետո Ֆրանսիայում տեղի չեն ունեցել այնքան խոշոր հեղափոխական ղեկեր, ինչպիսին, ասենք, Գերմանիայում:

Սակայն, հենց նույն Ֆրանսիայում, համենայն ղեպս, ֆաշիզմը գոյութիւն ունի և զարգանում է: Ֆրանսիական ֆաշիստների գաղափարները և գործելակերպն ամբողջովին նման են Իտալիայի և այլ յերկրների ֆաշիստական գաղափարներին, և գործելակերպին: Որինակ, ֆրանսիական ֆաշիստների ղեկավարներից մեկն այսպիսի մի լոզունգ առաջ քաշեց—«հանուն հայրենիքի, ընդդէմ հեղափոխութեան», վորպեսզի մանր բուրժուազիային գցի «ամբողջ հայրենիքի ընդհանուր բարորութեան համար» թակարդի մեջ: Ինչպես մյուս յերկրներում, այնպես էլ Ֆրանսիայում ֆաշիստները կազմակերպում են ղինվորական ջոկատներ, որինակ, ֆաշիստական կազմակերպութեան մեջ մտնողներին առիթ է յին այսպիսի հարցեր. «զենք ունե՞ք, պատերազմի մասնակցա՞նք և ղեկ գերեկվա և ղիշերվա ուղած ժամին»: Ինչպես մյուս յերկրներում, այնպես էլ Ֆրանսիայում ֆաշիստները համաձայնվում են յեկեղեցու հետ, վորպեսզի վերջինս աշակցի իրենց՝ գրավելու հավատացյալներին: Ֆրանսիայում նույնպէս, ինչպես ամեն տեղ, ֆաշիստները խոտորակում են

դշուղաղայիններին, արհեստավորներին, մանր խանութպաններին և այլ «մանր ժողովրդին» պաշտպանել նրանց խոշոր կապիտալիստներին ճնշումից, իսկ մյուս կողմից ֆաշիստները դադարեցրել փող են ստանում այդ խոշոր կապիտալիստներինց։ Որինակ, ֆրանսիական ֆաշիստների թերթ «Նոր Փարբ» 25 միլիոն ֆրանկ (մոտ 1,75 միլիոն ուլբլի) օտաջավ մի վոմե հարուստ Լեալից, խոշորագույն մանածագործական արհեստներից մեկի նախագահից։ Յեվ, վերջապես, ֆրանսիական ֆաշիստներն ուրախությամբ պատրաստ են պատեքազմ նյութելու Խորհրդային Միության դեմ և դրա համար առաջարկում են դաշնակցել գերմանական ֆաշիստներին հետ։

Նշանակում է, թեև դանազան յերկրներում ֆաշիզմի հաջողությունը միահավասար չէ—մեկում ավելի յե, մյուսում քիչ—այնուամենայնիվ մի յերկրի ֆաշիզմը չափազանց նման է վորևե այլ յերկրի ֆաշիզմին։

ԿԱՄ ՖԱՇԻԶՄԸ, ԿԱՄ ԿՈՄՈՒՆԻԶՄԸ

Մերևմե ինչպես է կայանում ֆաշիզմի ելույթունը։ Համաշխարհային պատերազմից հետո բուրժուական հասարակարգը շարունակ տենդով է բռնված։ Այժմյան համաշխարհային տնտեսական կրիզիսը, խառնաշփոթությունը մեկն է այս տենդի արտահայտություններից։ Բանվոր դասակարգն ավելի ու ավելի յե հեղափոխականանում, նա ըստեղծեց կոմունիստական կուսակցությունը, նա պատրաստվում է պայքարելու իշխանության համար։ Իսկ այդ ժամանակում Խորհրդային Միության մեջ տեղի յե ունենում սոցիալիստական շինարարություն, վորալիսին որինակ է հանդիսանում բոլոր յերկրների աշխատավորության համար, իսկ այդ ավելի էս ուժեղացնում է այն վտանգը, վորն սպառնում է ճնշողների տիրապետությանը։

Բուրժուազիան տեսնում է, վոր հին միջոցներով չի կարող գլուխ հանել հեղափոխության հետ։ Մասաներն արդեն չեն հավատում պարլամենտին։ Նշանակում է պարլամենտն անպետք է դառնում բուրժուազիայի համար։ Մասաները դադարում են հավատ ընծայելուց նաև սոցիալ-դեմոկրատներին (մենչեիկներին)։ Ճշմարիտ է, շատերը դեռ հավատում են նրանց, բայց ավելի պակաս, քան առաջ, որեցոր այդ հավատն ավելի ու ավելի յե պակասում։ Իսկ քանի վոր այդպես է, ապա ուրեմն բուրժուազիան վախենում է, վոր սոցիալ-դեմոկրատներն առաջվա նման չեն կարող հետ կանգնեցնել մասսաներին հեղափոխական պայքարից։

Յեվ ահա բուրժուազիան փոխում է դենքը։ Նրա նոր դենքը ֆաշիզմն է։ Փաշիզմը—դա անսահման բռնությունն է։ Դա—պրոլետարիատի ազատության և իրավունքների վորնչաացումն է։ Նա չի կարող պրոլետարիատի դեմ պայքարել իր սեփական ձեռքերով։ Յեվ ահա նա իր համար «ձեռքեր» է պատրաստում—մանր բուրժուազիայի ձեռքեր։ Իսկ դրա համար գործադրվում է խաբեբայություն, խոսվում է «հայրենիքի» բարորություն, նրա «խնամինների» մասին—հրեաների և կոմունիստների, դրա համար առատ խոստումներ են շուայվում լավացնելու «փողը մարդկանց», այսինքն մանր բուրժուազիայի կյանքը։

Ահա թե ինչ է ֆաշիզմը։ Դա—չեղած բռնությունն է, վորը միացված է անասելի սոսխոսություն, խաբեբայության հետ։ Դա խոտը կալիսալի անսահման իշխանությունն է, վորը հենվում է մանր բուրժուազիայի խաբված մասսաների վրա։

Ինչ էն անում սոցիալ-դեմոկրատները։ Նրանք կամ մասնակցում են հեղափոխական պրոլետարիատի դեմ գործադրվող բռնություններին, ինչպես Լեհաստանում, վորտեղ սոցիալիստական կուսակցության «դրուժինները» ֆաշիստներին հետ միասին սպանում են բանվորներին, կամ թե—

հենց այդ և գլխավորը—հետ են կանգնեցնում մասսաներին վճռական պայքարից, թազցնում են նրանցից ֆաշիստական վտանգը և միևնույն ժամանակ թշնամություն են սերմանում կոմունիստների դեմ: Իսպանիայում ֆաշիստական իշխանության որոշ սոցիալիստների թերթերը կոմունիստների դեմ բամբասանքներ և մատնող լուրեր տպեցին: Միաժամանակ սոցիալ-դեմոկրատներն այնպես են ձևացնում, վոր իբր թե իրենք «նույնպես» անբավական են ֆաշիզմից, սակայն նրա դեմ ուղղում են պայքարել միայն «խաղաղ» ճանապարհով, առանց արյունահեղության, առանց զենքի: Այսպիսի պոռոտախոսությունը հենց բուրժուազիայի սրտոջն է և այդ և պատճառը, վոր նա պատրաստ է մի առ ժամանակ ևս հանդուրժելու սոցիալ-դեմոկրատներին:

Կոմունիստ—բոլշևիկներն են ֆաշիզմի միակ և իսկական թշնամիները: Գլխավորն այն է, վոր կոմունիստները հանդիսանում են ֆաշիզմի դեմ մղվող մասսայական պայքարի միակ կազմակերպիչները: Ֆաշիստները, ամբողջ բուրժուազիան և նրա հլու կամակառարներն այս բանը շատ լավ են հասկանում: Այժմ լսեցեք, թե ինչ են ասում նրանք:

Ֆրանսիական ֆաշիստների պարազուլաններից մեկը (Տեռանտեն) ասում է.—«կոմունիստական կուսակցությունը — դա հիմնական թշնամին է: Առանց բացառության մնացած բոլոր կուսակցությունների հետ կարելի չէ բանակցել և համաեայնության գալ»:

Ֆրանսիայի ներքին դոքտերի մինիստր Սառոն նույն բանն է հաստատում.—«կոմունիզմը—ահա մեր թշնամին»:

Յեվ, վերջապես, նույն յերզն է յերգում ֆրանսական հայտնի սոցիալիստ Բլյումը.—«Յես ամեն ինչի պատրաստ եմ, միայն թե ջախջախի կոմունիզմը»:

Նրանք իսկապես վոր «ամեն ինչին պատրաստ են». այսինքն պատաս էն նախապահիք մաքեյու Ֆաշիզմին, ներքինք բանվորներից թազցնում են ճշմարտությունը ֆաշիզմի

մասին և ծայրահեղ դեպքում խորհուրդ են տալիս սոցիալ-բուլշևիզմի դեմ «խաղաղ ճանապարհով», այսինքն բանվորներին ուղղակի մատնում և հանձնում են թշնամու ձեռքը: Որինակ, Ավստրիայում սոցիալ-դեմոկրատները կառավարության մատնեցին այն պահեստները, ուր բանվորները զենք էյին թազցրել, իսկ միևնույն ժամանակ ֆաշիստները զինվում են ամենայն զորությամբ: Գերմանիայում սոցիալ-դեմոկրատները մխիթարում են բանվորներին, վոր իբր թե ֆաշիստները զենք չունեն, իսկ հենց նույն ժամանակում ֆաշիստները ամբողջ յերկրում ստեղծում են պահեստներ, վորոնք լիքն են հրացաններով և գնդացիներով, ըստ վորում նրանք այդ անում էյին և այն ժամանակ, յերբ իրենք սոցիալ-դեմոկրատներ էյին, կանգնած իշխանության դրոշմ:

Մինչդեռ սոցիալ-դեմոկրատները խորհուրդ են տալիս բանվորներին ֆաշիզմի դեմ «պայքարել խաղաղ ճանապարհով», կոմունիստները կոչ են անում բանվորներին՝ «զայլի» այլ կերպ չես կարող խաղաղացնել, յեթե նքա կաշին չպոկես»: Կամ Ֆաշիզմ, կամ կոմունիզմ: Բուրժուական աշխարհը ծանր հիվանդ է: Բուրժուազիան ուղղում է «բուժել» այն ֆաշիստների միջոցով: Իսկ կոմունիստները մատաներին առաջնորդում են դեպի պայքար պրոլետարիատի իշխանության համար, կոմունիզմի համար:

Այս բանը հասկացան զերմանական բանվորները՝ ընտրությունների ժամանակ կոմունիստներին տալով 4 և կես միլիոն ձայն: Կարելվորն այն է նաև, վոր գյուղացիներին մի մասն էլ ձայն տվեց կոմունիստներին: Բայց արեւ տես, վոր ֆաշիստներն էլ միլիոնավոր ձայնի ստացան և ձգուում են իշխանության: Ծիշտ է, այս միլիոններից շատերը խաբված, անբավական են, բայց և չգիտեն ուր գնալ: Կոմունիստներն աշխատում են մերկացնել ֆաշիստական խաբեքայությունը, ազատել ֆաշիստական դուրմանից միլիոնավոր խաբված «փոքր մարդկանց», նրանց իրենց կողմը դրավել:

շուրջ տալ նրանց, վոր կարիքից դուրս գալու միակ յերջ
վոչ թե ֆաշիզմն է, այլ պրոլետարիատի հեղափոխական
գիւղատուրան: Սակայն շատ աշխատավորներ դեռ վատհա-
նում են ֆաշիստներին, այդ իսկ պատճառով պայքարը դժ-
վար է լինելու:

Սյժմ մենք պետք է լավ իմանանք, վոր Խորհրդային
Միութիւնը միջազգային հեղափոխութեան առաջավոր ջո-
կատն է: Ֆաշիզմի հաղթութիւնները պատերազմ են նա-
խադասարատում ԽՍՀՄ-ի դեմ: Համաշխարհային պրոլետա-
րիատի յուրաքանչյուր պարտութիւնը հարվածում է Խոր-
հրդային Միութեան: Մենք պետք է ծախանք մեր սոցիա-
լիստական շինարարութիւնը և ուժեղացնենք Խորհրդային
յերկրի պաշտպանութիւնը: Մեր ամեն մի հաջողութիւնը
հարված է համաշխարհային ֆաշիզմին: Մեր ամեն մի հա-
ջողութիւնը—ողնութիւն է միջազգային պրոլետարիատին
և բոլոր ճնշվածներին:

Մրա մասին պարզ ասում է գերմանական բանվորուհի
Դեթա Պեցոլսն իր նամակում.

«Ձեր հաղթութիւնները հանդիսանում են յիվ մեր հաղ-
թութիւններ... Մենք հավաստում ենք ձեզ, խորհրդային
պրոլետարներ, վոր մեր ապագա գերմանական հեղափոխու-
թիւնը լինելու յի յիվ ձեր հաղթութիւնը»:

Ответственный редактор
А. Г. Авакян
Технический редактор
А. Г. Мазманы

№ 2005
1932 года.

Сд. в набор 4/1—1932 г.
Сд. в печать 20/1—1932 г.
Объем 1 печ. листа
Тираж 2000 экз.

<< Ազգային գրադարան



NL0197140

О. П. О.

5.184
801
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

На армянском языке

Г. БЕРГМАН

ФАШИЗМ

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԳՈՒԼՆՈՍԵԳ՝

ԴՆԱՅՈՒՆԻՆԻ, ՄԱՍԿՈՎԱՍԿԱՅԱ ՓՈՒԼ., 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻՂՆՑԵՆՏՐ)